

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2020**

**«Ականազերծման գործողությունների ժամանակ բժշկական աջակցության և առաջին
բժշկական օգնության» ծրագիր**

2021 թ. մարտի 16-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցավ «Ականազերծման գործողությունների ժամանակ բժշկական աջակցության և առաջին բժշկական օգնության» 77,685 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Ականազերծման և Ուտիլիզիացիայի» հիմնադրամի տնօրեն Քնարիկ Դավթյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ պարոն Սուրեն Սահակյանի և «Հումանիտար Ականազերծման և Փորձագիտական Կենտրոնի» տնօրեն, պարոն Ռուբեն Առաքելյանի ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է ձեռք բերել շտապօգնության մեքենա՝ հումանիտար ականազերծման գործողությունների ժամանակ անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերման և Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում առաջին բուժօգնության դասընթացների կազմակերպման համար: Արդյունքում, տվյալ ծրագիրն կունենա ավելի քան 38,000 շահառու: Ծրագրի արդյունքում ակնկալվում է հումանիտար ականազերծման գործողությունների ժամանակ ապահովել ավտանգության բարձր մակարդակ և վթարների հավանականության նվազեցում, ինչպես նաև իրականացնել առաջին օգնության դասընթացներ վերը նշված մարզերից ընտրված տեղական դպրոցներում:

Իր խոսքում, Դեսպան Յամադան նշեց, որ անվտանգության բարձր մակարդակի ապահովումն և վթարների հավանականության նվազեցումը շատ կարևոր դեր են կատարում հումանիտար ականազերծման գործողությունների ժամանակ: Դեսպան Յամադան հավելեց, որ հատկապես ուրախ է, որ այս ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության և Ճապոնիայի աջակցության քաղաքականության առաջնահերթություններին՝ նպատակաուղղված հումանիտար ականազերծման գործողություններում առաջին բժշկական օգնության ցուցաբերմանը:

Իր հերթին, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ պարոն Սուրեն Սահակյանն իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը այս կարևոր ծրագրին օժանդակելու համար:

Տիկին Դավթյանն իր խոսքում նշեց, որ այս ծրագիրը ոչ միայն կօգնի Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի բնակիչներին, ովքեր նախկինում տուժել են պայթուցիկ մնացորդներից, այլև ականապատ տարածքների մերձակայքում ապրող մարդկանց համար այս ծրագրի կծառայի որպես ռիսկերը մեղմացնող նախադրյալ:

Պարոն Ռուբեն Առաքելյանը, իր հերթին երախտագիտություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև Հայաստանում Ճապոնիայի դեսպանությանը՝ հումանիտար ականագերծման գործողություններում ներգրավված կազմակերպությունների կարողությունների բարձրացման գործում շարունակական աջակցության և ավանդի համար:



ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ պարոն Սահակյանի ելույթը



Դեսպան Յամադայի ելույթը



«Ականագերծման և Ուտիլիզիացիայի» հիմնադրամի տնօրեն Քնարիկ Դավթյանի ելույթը



«Հումանիտար Ականագերծման և Փորձագիտական Կենտրոնի» տնօրեն, պարոն Ռուբեն Առաքելյանի ելույթը



Ստորագրման արարողության մասնակիցները



Դեսպան Յամադան և տիկին Դավթյանը պայմանագրի ստորագրումից հետո